

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Երբ Ստամբուլի և համայն Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ ու Մեր սիրելի եղբայր Շնորհք Գալստյանը ուղևորվելու էր դեպի հայ եկեղեցու պատմական ու հնագույն սուրբ Աթոռը՝ ս. Էջմիածին՝ մասնակցելու այնտեղ գումարվելիք եպիսկոպոսական ժողովին, Մենք խնդրեցինք նրան՝ հաղորդել Ձերդ սիրեցյալ Սրբությանը Մեր եղբայրական ողջույններն ու շնորհավորությունները, ինչպես նաև Մեր սրտագին աղոթքները եպիսկոպոսական ժողովի աշխատանքների ամբողջական հաջողության համար:

Մենք ոչ միայն մեծ հարգանք ունենք հանդեպ ձեր հին, հայկական առաքելական քույր եկեղեցին, նրա նվիրապետությունն ու քրիստոնյա ժողովուրդը, այլ նաև հավատում ենք, որ նրա զարգացումը զարգացումն է ամբողջ քրիստոնեական եկեղեցու մինչև այն ժամանակը, երբ մեր Տերը շնորհելու է Իր միության պարգևը, մասնավորաբար մեր երկու հին արևելյան եկեղեցիներին:

Մենք շատ ուրախացանք, երբ ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքը իր մանապարհորդությունից վերադարձին գոհունակությամբ ու հպարտությամբ պատմեց Մեզ եպիսկոպոսական ժողովի աշխատանքների մասին և հաղորդեց Ձերդ Սրբության միշտ հիշատակելի ու եղբայրական ողջույնները, ինչպես նաև Մեզ հանձնեց Ձեր ուղարկած մեդալիոնը՝ պատրաստված ի հիշատակ սրբալույս մեռոնի օրհնության: Մենք այն ստացանք խոր հուզումով և պահելու ենք մեր գանձարանում:

Ջերմորեն շնորհակալություն ենք հայտնում, ողջագուրում ենք Ձեզ սուրբ համբույրով: Մնամք եղբայրական սիրով և խորը հարգանքով՝

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական պատրիարք հունաց

3 նոյեմբերի 1969 թ.,
Ստամբուլ